ներկայացուցիչ Ա. Աբեղեանը հիացումով մատնանշեց, որ «մի տարի առաջ մահուան դատապարտուած ժողովուրդը այսօր ինքնավարութեանց համագումար կազմակերպելու հնարաւորութիւնն ունի»։ Խորհրդարանի սոց.-յեղափ. ֆրակցիայի ներկայացուցիչ Վ. Մինախորեանը կանգ առաւ «ինքնավարութիւնների մեր կեանքում կատարելիք բացառիկ դերի վրա — պարզել մեր երկրի վիճակը, տալ մեզ նրա իսկական պատկերը»։ Ս. Ատուածատրեանը խօսեց Հ. Յ. Դ. Երևանի Կենտր. Կոմիտէի կողմից, Գ. Շահինեանը՝ Երևանի Բանուորական Խորհրդի։ Գրաւոր ողջոյններ էին ուղարկել Հայ Ժողովրդ. կուսակցութեան Հայաստանի Կենտր. Կոմիտէն, Կարսի քաղաքային ինքնավարութիւնը և ուրիշ հիմնարկութիւններ։

Յաջորդ, յուն. 5-ի նիստում, Խորհրդարանին, կառավարութեան ու բանակին ուղղած ողջոյնի բանաձևեր քէֆարկելուց յետոյ, համագումարը կազմեց նախագահութիւն՝ Մ. Մուսինեան, Յ. Բուդաղեան և Հ. Նոհրատեան և 5 յանձնաժողովներ. 1) Քաղաքների Միութեան կանոնադիրը մշակող՝ Ա. Բարխուդարեան, Ա. Տիրոսեան, բժ. Նահապետեան. 2) Ելևմտական՝ Յ. Բուդաղեան, Լ. Թադէոսեան, Ա. Մարդարեան, Վ. Աֆրիկեան, Մ. Մարդարեան. 3) Պարենաւորման՝ բժ. Մելքոնեան, Աւան-Խուդրաշեան, Մ. Տէր-Աբրահամեան, Զալդրանեան. 4) Կրթական-դեղարուեստական՝ Մելիք-Շահնազարեան, Ս. Մանուկօղլեան, Վ. Շահազիզ. 5) Դաղթականական՝ Ա. Շարաֆեան, Ա. Բարխուդարեան, Ա. Մարդարեան։ Որից յետոյ, անցաւ օրակարգի հարցերին՝ զեկուցումներին ու դրուած խնդիրների քննութեան։

Համագումարը զբաղուեց Հայաստանի քաղաքների կեանքին վերաբերող բազմաթիւ իրաւական, տնտեսական, ելևմտական, պարենաւորման, կրթական-մշակութային, բժշկա-առողջապահական, շինարարական խնդիրներով։ Ներկայացուցին խնամուած ու լուրջ զեկուցումներ, մասնագիտական հետազօտութիւններ, բարենորոգման հիմնական ծրագիրներ։ Աշխատանքներն անցան լաւած հետաքրքրութեամբ ու ջերմ մտերմական մթնոլորտում։ Ընդունուեցին քաղաքային կեանքի բոլոր կողմերը շօշափող բանաձևեր։ Եւ, ի վերջոյ, հիմքը դրուեց Հայաստանի Քաղաքների Միութեան՝ մի կազմակերպութիւն, որին ահագին դեր էր վիճակուելու Հայաստանի կեանքում։

Երկու շաբաթ յետոյ, տեղի ունեցաւ Հայաստանի իրական ճանաչումը, որ աննկարագրելի ցնծութեամբ ընդունուեց ժողովրդի կողմից։

Յունս. 19-ին, Գերագոյն Խորհուրդը հանեց հետևեալ որոշումը. — «1. Հայկական պետութեան կառավարութիւնը ճանաչուած է *de facto*. 2. Սոյն ճանաչումը չի կանխորոշում այս պետութեան ապագայ սահմանների խնդիրը»։

Յունուար 23-ին ճանաչման լուրը ստացուեց Երևանում և կայծակի արագութեամբ տարածուեց հասարակութեան մէջ։ Մի ժամ յետոյ ամբողջ քաղաքն արդէն ոտքի վրա էր։ Ժամը 3-ին քաղաքի պարէտի շէնքի առջև խնուեց ահագին բազմութիւն. եկաւ և գօրքը նուագախմբով։ Պարէտ Ա. Շահխաթունին մի ոգևորուած ճառ խօսեց օրուայ նշանակութեան մասին և